

11.06.2014 07:57



**-Փաստաբանական կորպուսում ի՞նչ խնդիրներ կան, որոնք պետք է լուծեք և ի՞նչ զարգացումներ եք սպասում:**

-Նախարարի հրամանով նշանակվել եմ Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամ և արդեն երկու անգամ մասնակցել եմ դպրոցի խորհրդի աշխատանքներին ու հուսով եմ արդյունավետ է եղել իմ մասնակցությունը: Բայց փաստաբանության մասով կարող ենք փաստել մեկ բան՝ այսօր Հայաստանում փաստաբանությունը ամենակայացածն է: Հայաստանում գործող փաստաբանական ինքնակառավարման միավորումը, ոճը կարող է բացարձակ օրինակ դառնալ շատ-շատ երկրների համար: Ես վստահ եմ այդ հարցում: Փաստաբանությունում թերևս խնդիր կար փաստաբանական ծառայությունների որակի բարձրացման հարցում: Միայն այն փաստը, որ մենք ունենք արդեն կայացած փաստաբանություն և հանգիստ նստել, արդարացված չի լինի, և փաստաբաններն իրենք իսկ արձանագրում են իրենց խնդիրները, ինչը գովելի է, ունակ են իրենց խնդիրների լուծման ուղղությամբ իրականացնել գործողություններ: Կառավարությունն իր գործունեության ծրագրում փաստաբանության մասով նույնպես նախատեսել է որոշակի համակարգերի ներդրում, մասնավորապես փաստաբանական անվճար ծառայություններ մատուցելը: Արդարադատության նախարարությունը կօժանդակի առավել արդյունավետ կատարվեն այդ աշխատանքները: Մեր օրենսդրությամբ մեծ դեր է տրված փաստաբաններին, և նրանք, իրոք, շատ մեծ դեր են կատարում: Կարծում ենք, որ փաստաբանները, բացի իրենց հիմնական աշխատանքից, նաև պետք է կրեն որոշակի հանրային պատասխանատվություն՝ նրանց դերը շատ բարձր է արդարադատության իրականացման գործում: Ես կարծում եմ, որ փաստաբաններն ունակ կլինեն գնահատելու և ներդնելու անվճար ծառայություններ մատուցելու արդյունավետ համակարգ, հանդես գալ համապատասխան առաջարկություններով: Առաջիկայում, ինչևէ, փաստաբանների հետ հանրային իրազեկման լայն ծրագրեր կփորձենք իրականացնել: Տեսնենք, աշխատանքներն առջևում են:

**--Վերջերս բուռն քննարկում ծավալվեց Արդարադատության ակադեմիայում փաստաբանների ուսանելու հարցի շուրջ: Դուք**

## **Ի՞նչ տրամադրվածություն ունեք այս հարցի վերաբերյալ, պարոն Մկրտչյան:**

-Ամբողջ խնդիրը համակարգերի արդյունավետ կիրառումն է, և եթե այսօր գործող Փաստաբանական դպրոցն արդյունավետ է, ապա կշարունակի գործել: Եթե ինչ-որ այլ կառույց ավելի լավն է լինելու, քան դպրոցը, ապա փաստաբաններն իրենք ինքնուրույն կարող են որոշել ու ինքնուրույն աշխատել այդ ուղղությամբ: Համենայնդեպս, մենք չունենք այնպիսի աշխատառժ և մոտեցում, որ ասենք՝ սա չպետք է լինի, սա պետք լինի: Ժամականը և կառավարման համակարգը ինքնուրույն կթելադրեն զարգացումներ կամ չեն թելադրի ու կապացուցեն, որ համակարգերն ինքնուրույն գործելով շատ ավելի արդյունավետ են գործում:

Շարունակությունը՝ այստեղ

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```